

«ՍՊԱՂԱՆԱՑ ՄԱԿԱՐ»

Posted on July 27, 2011 by Keghart


Սպաղանաց

Մակար

Category: [Opinions](#)




Վահե Յ. Աբելեան, Յուլիս 1993

*Հեղինակին ներքոյիշեալ ցարդ չհրատարակուած պատմագիտական հետաքրքրութիւն ներկայացնող գրութիւնը մշակուած է շուրջ քսան տարիներ առաջ: **Խմբ.*** 

Պատանեկան տարիքս դեռ նոր թեւակոխած էի, երբ հայրս զիս անդամագրեց Պէյրուքի Հ.Յ.Դ. Բարգէն Սիւնի Պատանեկան Միութեան, որուն հանդիպումները տեղի կ'ունենային «Ժողովրդային Տան» մէջ, հնադարեան ու հնամաշ շէնքէ մը ներս: Ժողովասրահի պատերուն վրայի նկարները, անոր մնայուն բնակիչ Շապագ Հայրիկը, սենեակները օգտագործող երիտասարդները եւ տարեց մարդիկը, խորհրդաւոր մթնոլորտ մը կը ստեղծէին կառոյցով խախուտ այդ ժողովասրահէն ներս:

Վահե Յ. Աբելեան, Յուլիս 1993

*Հեղինակին ներքոյիշեալ ցարդ չհրատարակուած պատմագիտական հետաքրքրութիւն ներկայացնող գրութիւնը մշակուած է շուրջ քսան տարիներ առաջ: **Խմբ.*** 

Պատանեկան տարիքս դեռ նոր թեւակոխած էի, երբ հայրս զիս անդամագրեց Պէյրուքի Հ.Յ.Դ. Բարգէն Սիւնի Պատանեկան Միութեան, որուն հանդիպումները տեղի կ'ունենային «Ժողովրդային Տան» մէջ, հնադարեան ու հնամաշ շէնքէ մը ներս: Ժողովասրահի պատերուն վրայի նկարները, անոր մնայուն բնակիչ Շապագ Հայրիկը, սենեակները օգտագործող երիտասարդները եւ տարեց մարդիկը, խորհրդաւոր մթնոլորտ մը կը ստեղծէին կառոյցով խախուտ այդ ժողովասրահէն ներս:

Այս մթնոլորտին մէջ էր, որ կը սկսէր Բարգէն Սիւնի Պատանեկան Միութեան ազգային դաստիարակութիւնը, որուն տարեկան հերթականութեամբ, անպայմանօրէն մաս կը կազմէր Բարգէն Սիւնին, Պանք Օթոմանի Գրաւումը եւ Սպաղանաց Մակարի Դէպքը: Ժամանակի ընթացքին դէպքերը եւ դէմքերը որոշ իրավիճակ կը ստանային մեր պատանեկան մտաշխատանքներուն մէջ շնորհիւ լուսանկարներուն, բայց Սպաղանաց Մակարի պարագան տարբեր էր: Ան որեւէ նկար չունէր: Ո՛չ պատերուն վրայ, եւ ո՛չ ալ գիրքերուն մէջ:

Հ. Յ. Դ. Հարիւրամեակի Յուշամատենը թղթատած միջոցիս, հանդիպեցայ Սպաղանաց Մակարի համար յարմարցուած, գծագրուած դիմանկարի մը, որ զետեղուած էր Գեորգ Չաւուշի լուսանկարին կողքին: Պատշաճ լուսանկար մըն է անկասկած, երբեմնի Սասնայ Սպղանքի իշխան Մակարին, որ պատանեկան օրերես ի վեր իմ մէջս մնացած է Տօրք Անգեղի նման տարտամ մտապատկեր մը:

Սպաղանաց Մակարի եւ Գեորգ Չաւուշի տարակարծութեան պատճառը, ինչպէս Ռուբէն

Փաշան կը ներկայացնէ իր յուշերուն մէջ, Գեորգ Չաւուշի ամուսնութիւնն էր: Կրնայ ըլլալ որ այլ պատճառներ ալ կային: Վերջին հաշուով հայդուկապետին եւ իր զինակիցներուն միջեւ անկասկած որ տարակարծութիւններ կը ծագէին, որոնք շատ հաւանաբար կը հարթուէին տեղւոյն վրայ: Բայց այս պարագան տարբեր էր: Գեորգ Չաւուշ հայդուկապետն էր, սակայն իրեն տարակարծիք զինակիցը՝ Սպաղանաց Մակար, պարզ ֆետայի մը չէր: Սպաղանաց Մակարի վարկն ու հեղինակութիւնը այնքա՛ն ազդեցիկ էր, որ Հ. Յ. Դեան Գերագոյն մարմինը մասնաւոր պատուիրակ կը դրկէր, յանձինս Ռուբէն Տէր Մինասեանի, հարթելու համար այս երկու հեղինակաւոր հայդուկներուն միջեւ ծագած տարակարծութիւնը, որ սկսած էր վնասել ֆետայական աշխատանքներուն: Թէ ինչպէս Ռուբէն տնօրինեց պարագան, այդ կը թողում ընթերցողին հետաքրքրութեան: Այս դէպքը հոս կը ներկայացնեմ բնորոշելու համար Սպաղանաց Մակարի հեղինակութիւնը, որ ո՛չ միայն կը տարածուէր Դուրան Բարձրավանդակին վրայ, այլ կը հասներ մինչեւ Հ. Յ. Դեան Գերագոյն մարմինը:

Ո՞վ էր Սպաղանաց Մակարը

Սպաղանաց Մակարը Սասնայ Սպղանքի տէրն ու իշխանն էր: Ռուբէն իր յուշերուն մէջ կը նկարագրէ զինք որպէս «Աժդահա մը, շա՛տ ահարկու»: Ժողովուրդը կ'ըսէր, «Գեորգ գայլ է կամ վագր, իսկ քեռի Մակարն էլ, կռուի ժամանակ զարկած գոմէշ է»: Եւ իրաւ կը յուշէ Ռուբէն, «Մեծ ու արիւնոտ աչքերով, խոշոր գլխով եւ հսկայ մարմինով այդ աժդահա մարդը, կռուի ժամանակ ո՛չ աջ կը նայէր, եւ ո՛չ ալ ձախ. ահարկու ձայնով, խենչարը ձեռքին առաջ կ'երթար եւ կամ անշարժ կը մնար, թէկուզ հարիւրաւոր թնդանօթներ պայթէին իր վրայ»:

Սասնայ լեռներուն վրայ ծնած ու հասակ առած այս մարդը, բնութեան անաղարտ զաւակը եղած ըլլալու էր: Անուս, անգրագետ եւ առհասարակ ո՛չ մէկ կարիքը զգացած ըլլալու էր ո՛չ մէկ խորամանկութեան կամ որեւէ փափկանկատութեան: Աւատապետի իր հանգամանքով բիրտ էր ու ըմբոստ: «Ուսումով մարդիկ քընզ Տամատեան, քընզ Գուրգէն, Արմենակ, վըր մերին գլխուն գլխաւո՞ր...: Իդա ի՞նչ է Արաբօ եւ Մուրատ, հա Ապրոն ու Գեորգ, թէկուզ իմ սանահէր Սերոբ: Չըմէնն ալ քընզ Մակար չարժեն»: Սպաղանաց Իշխան Մակարի համար ամէնքը առաւելագոյն պարագային իրեն գործակիցներ էին:

Ե՞րբ եւ ինչո՞ւ Սպաղանաց Մակարը անդամակցած է ֆետայի

Սպաղանաց Մակարը ֆետայի անդամակցելով, հաւատարիմ մնացած էր ֆետայական աւանդական կարգ ու սարքին եւ չէր կազմած իր սեփական ընտանիքը: Երեւոյթները ցոյց կու տան որ ան ֆետայի անդամակցած էր, երբ հայդուկային շարժումը սկսած էր կազմակերպչական բնոյթ ստանալ Դուրան Բարձրավանդակէն ներս: Ան դարձած էր զինակիցը Սերոբ Աղբիւրի, Գեորգ Չաւուշի, Հրայրի, Անդրանիկի, Մուրատի, Տամատեանի

Եւ Տարօնի այլ անուանի ֆետայիներուն, որոնք գործեցին Սասունի եւ Տարօնի Բարձրավանդակէն ներս: Իր գինակիցները արժանացան գէթ լուսանկարի մը, ինչպէս է պարագամ Գեորգ Չաւուշի, լուսանկարուած Աղթամար կղզիի ժայռերուն վրայ՝ Վահան Փափագեանին կողմէ: Սակայն հայդուկային կեանքը զրկեց Սպաղանաց Մակարը այդ պերճանքէն իսկ: Եւ ան պատանի երեւակայութեանս մէջ մնաց Ձեւով Օհանին եւ Տորք Անգեղին նման մտապատկեր մը:

Սպաղանաց Մակարի ֆետայի անդամակցութեան դրոշապատճառը կարելի է գտնել Մակարի գինակց եւ օր մըն ալ միասնաբար զոհուելու ճակատագրուած Շենիկի Մանուկին եւ Ռուբէն Տէր Մինասեանի միջեւ տեղի ունեցած հետեւեալ խորհրդակցութեան. Ռուբէն հարց տուած էր Շենիկի Մանուկին, որ Սպաղանաց Մակարի նման ունեւոր ընտանիքէ կու գար, թէ ինչո՞ւ ձգած էր իր հողերն ու հանգիստ կեանքը եւ դարձած ֆետայի:

«Երբ Մարաթուկ կամ Սուրբ Կարապետ ուխտի գնան», կը պատասխանէ Շենիկ Մանուկ, «մատաղցուի համար չեն ընտրէր քոստո այծերին, անընդունելի է Սուրբին համար, միշտ պետք է ընտրել զլաւ խոյերին ուխտի նպատակին հասնելու համար: Մեր Աստուած Հայոց ազատութիւնն է, աշիր ու հարուստ հայեր ամենէն առաջ պետք է մատուցուին այդ զոհասեղանին»:

Շատ հաւանաբար, նոյն այս հոգեբանութիւնն էր, որ մղած էր Սպաղանի աւատապետ Իշխան Մակարը թողնելու իր ընկերային դիրքը, տունը, կալուածները եւ դառնալ ֆետայի, որուն համար Շենիկի Մանուկ եւ Սպաղանաց Մակար պիտի դառնային պարարտ զոհեր:

Ի՞նչ կռիւներու մասնակցած է Սպաղանաց Մակար

Համառօտ կերպով հետեւեալ ճակատամարտները կարելի է թուել, որոնց մասնակցած էր Սպաղանաց Մակար.

- Սերոբ Աղբիւրին դաւադրաբար թունաւորող մարդուն եւ անոր ընտանիքին ահաբեկումը կազմակերպած Անդրանիկի ղեկավարութեամբ:
- Պշարէ Խալիլ քիւրտ աշիրեթապետին Սպաղանքի վրայ յարձակման կռիւը:
- Նոյն այդ Պշարէ Խալիլի գլխատման կռիւը՝ Անդրանիկի ղեկավարութեամբ:
- 1890-93 Սասնոյ, Տալուրիկի, Անտոկի, Ծովասարի կռիւները:
- 1904 Սասնայ երկրորդ ապստամբութեան մասնակցութիւնը:
- 1904-08, Տարօնի եւ Վասպուրականի կռիւներուն իր մասնակցութիւնը:

Այս ամբողջ ֆետայական կռիւներուն, Սպաղանաց Մակար ստացած է հրամանատարի

պատասխանատու պարտաւորութիւններ: Շատ հաւանաբար չափազանցութիւն պիտի չըլլայ շեշտել, որ 1890-էն մինչեւ իր եղերական մահը, Սպաղանաց Մակար մասնակցած է Սասնայ եւ Դուրան Բարձրավանդակի ֆետայական գլխաւոր ճակատամարտերուն եւ գործած այդ շրջանէն ներս գործող անուանի հայդուկներուն հետ: Սպաղանաց Մակար անգիտակից չէր հայ յեղափոխական շարժման իր բերած նպաստին: Իրեն յատուկ ոճով եւ պարզախօսութեամբ, այսպէս կը ներկայացներ իր բերած նպաստը.

«Ամբողջ հայ ազգը Սասուն կը նայի: Սասունն ալ հայ ազգի հոգին: Իսկ Սասունի հոգին ալ Սպաղանք եղած է: Երբ Սիմալըն Տամատեանը կը մատներ, երբ Կելիէ Կիւզանը Աբուն կը մեռցնէր, երբ ամբողջ դաշտը եւ Վերի Գեալէն Սերոբն ու Գուրգէնը դուրս կը վնտէին, ո՞վ էր վառ պահեց յեղափոխութեան ճրագը, ո՞վ էր որ ֆետայիներուն օթեւան տուեց եւ կռնակ եղաւ...: Դա՛ Սպղանքն էր եւ քեռի Մակարը:»

Ի՞նչպէս զոհուեցաւ Սպաղանաց Մակարը

Գեորգ Զաւուշի Սուլուխի ճակատամարտին նահատակութենէն ետք, Դուրան Բարձրավանդակի մէջ որպէս ղեկավարներ մնացին Սպաղանաց Մակարը եւ Ռուբէն Տէր Մինասեանը: Ահաւասիկ այն ժամանակ էր որ լուր հասաւ իրենց, որ Գեորգի կինը՝ Եղսոն եւ զաւակը՝ Վարդգէս վտանգի մէջ են: Սպաղանաց Մակար ստանձնեց անոնց ապահովութեան պատասխանատուութիւնը: Ան՝ այժմ ստանձնած էր պաշտպանութիւնը կնոջ մը, որուն ամուսնութիւնը իր եւ իր զինակիցին միջեւ խոր տարակարծութեան պատճառ հանդիսացած էր:

Երբեմնի հայդուկապետ Գեորգ Զաւուշի ընտանիքը փոխադրելու ժամանակ, Մակարը պաշարուեցաւ իր զինակից Շենիկի Մանուկին հետ: Մակարը փախցնել տուաւ Գեորգի զաւակը՝ Վարդգէսը, ըսելով որ «ճիժ է, գուցէ փրկուի»: Իսկ Գեորգի կինը՝ Եղսոն, իր անմիջական պաշտպանութեան տակ պահեց, ըսելով. «Եղսոն նամուս է, պետք չէ թշնամիին ձեռքը անցնի»: Եղսոն ու Վարդգէսը փրկուեցան, սակայն Սպաղանաց Մակարը եւ Շենիկի Մանուկը դաճան պարարտ խոյերը զոհասեղանին:

ԾԱՆՕԹ. Այս գրութիւնը քաղած եմ ընդհանրապէս մօրեղբօրս՝ Դոկտ. Անդրանիկ Զէլէպեանի «Յեղափոխական Դէմքեր» գիրքէն եւ Ռուբէնի «Յուշեր»էն:

